

ԲԱՂԿԱՑԱԾ Է 21 (քսանմեկ) էջից
ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 3 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 3

ՀԱՍՏԱՍՎԱԾ Է
«ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԵՎՏՐԻ ՊԱԼԱՏԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
15.10.2024թ.-ի
ԺՈՂՈՎԻ ԹԻՎ 15.10.2024թ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ՝

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
«23» հունվար 2019թ.
Գրանցման համար՝ 211.171.1054859
ՀՎՀՀ՝ 02551618
23 հունվար, 2019 թվականին հաստատված
կանոնադրության թիվ 02 փոփոխությունը
գրանցված է իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից


ՆԱԽԱԳԱՀ


ԷԼԻՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

« 11 » 05 2024թ.

Աշխատակից՝





**«ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԵՎՏՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)**

Երևան 2024թ.

CONSISTS OF 21 (twenty one) PAGES

PRINTED IN TOTAL 3 COPIES

COPY _

APPROVED

BY THE MINUTES N 15.10.2024
OF 15.10.2024 OF THE GENERAL MEETING OF
“AMERICAN CHAMBER OF COMMERCE IN ARMENIA”
PUBLIC ORGANIZATION

ON 15.10.2024

President



ELINA MARKARYAN

REGISTERED

BY THE STATE REGISTER OF LEGAL ENTITIES OF THE
REPUBLIC OF ARMENIA

«23» January 2019

Registration Number 211.171.1054859

TIN 02551618

23 January 2019 amendment to the registered charter

_____ is registered by the state register of legal
entities

«———»—————2023.

State officer

**“THE AMERICAN CHAMBER OF COMMERCE IN ARMENIA”
PUBLIC ORGANIZATION
CHARTER
(NEW EDITION)**

Yerevan 2024

I.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

GENERAL PROVISIONS

1. «Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ «Պալատ») Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների իրավաբանական անձանց, հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ և որը հանդիսանում է «Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» իրավաբանական անձանց միության (գրանցված 25.02.2000թ., գրանցման համարը՝ 286.150.03834, ՀՎՀՀ՝ 02551618) գույքի և պարտավորությունների իրավահաջորդը:

“The American Chamber of Commerce In Armenia” public organization (hereinafter referred to as “the Chamber”) is a public organization of legal entities of the Republic of Armenia and foreign states, having a status of non-commercial organization and is the legal successor of the “American Chamber of Commerce” Union of Legal Entities (established on the 25th of January 2000, registration number 286.150.03834, taxpayer identification number 02551618) as a result of its restructuring.
2. Պալատը գործում է համաձայն սույն Կանոնադրության (այսուհետև՝ «Կանոնադրություն») և Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

The Chamber shall operate in accordance with this Charter (hereinafter referred to as “the Charter”) and in compliance with the legislation of the Republic of Armenia.
3. Պալատի գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

The principles of the Chamber’s activities are lawfulness, non-discrimination, integrity, voluntary membership, common interests of its members, self-governance and accountability.
4. Պալատի անվանումն է՝ «Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն, իսկ կրճատ՝ «ԱԱՊՀ» ՀԿ: Պալատի անվանումը անգլերեն՝ "American Chamber of Commerce in Armenia" Public Organization, իսկ կրճատ՝ "AmCham" PO:

The Chamber’s name is “American Chamber of Commerce in Armenia” Public Organization, in short “AmCham” PO. The Chamber’s name in Armenian is «Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն, abbreviated as «ԱԱՊՀ» ՀԿ.
5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0010, Ամիրյան փողոց շենք 1, հեռախոս՝ +374 (10) 599 902, էլ. հասցե՝ info@amcham.am:

The address of the Organization is: 1 Amiryan Street, 0010 Yerevan, Republic of Armenia; phone number: +374 (10) 599 902 ; e-mail address: info@amcham.am.

6. Պալատը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան: The Chamber shall operate throughout the territory of the Republic of Armenia and in foreign countries in accordance with the laws of those countries.
7. Պալատը կարող է հիմնադրել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ: The Chamber may establish branches and representative offices.
8. Պալատն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալու նրա մասնակից: The Chamber is entitled to carry out entrepreneurial activities in accordance with the objectives laid down in its Charter, dispose its assets and outcomes of its activities for such objectives, as well as to establish a commercial organization or to become a member thereof in the manner prescribed by law.
9. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար Պալատը համագործակցում է ինչպես հայաստանյան, այնպես էլ օտարերկրյա պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ: To implement its goals and objectives, the Chamber shall cooperate with Armenian and foreign state governance and local self-government bodies, international and foreign organizations and other organizations registered in the Republic of Armenia.

II. ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱԼ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

THE SUBJECT AND OBJECTIVES OF THE CHAMBER'S ACTIVITIES

10. Պալատի գործունեության առարկան խթանելն է ԱՄՆ, օտարերկրյա և տեղական ներդրումները Հայաստանում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ինչպես նաև աշխատել Հայաստանի Հանրապետության կառավարության և բիզնեսի առաջնորդների հետ՝ խթանելու ավելի բարենպաստ բիզնես միջավայր և սոցիալապես պատասխանատու բիզնես: The subject of the Chamber's activities is to promote U.S., foreign, and local investments in Armenia and the United States of America, and to work with the government of the Republic of Armenia and business leaders to foster a more favorable business climate and socially responsible business.

11. Պալատի գործունեության նպատակներն են՝
- 1) նպաստել Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) միջև բոլոր տեսակի փոխշահավետ գործարար կապերի հաստատմանը,
 - 2) ներկայացնել իր անդամների ընդհանուր տնտեսական շահերը և օժանդակել դրանց,
 - 3) նպաստել Հայաստանի Հանրապետությունում առևտրի ու ներդրումների համար նպաստավոր մթնոլորտի զարգացմանը,
 - 4) նպաստել Հայաստանի Հանրապետություն-Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործարար կապերին վերաբերող տնտեսական հարցերի արդյունավետ լուծմանը,
 - 5) աջակցել ԱՄՆ ձեռներեցությանը Հայաստանի Հանրապետությունում ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված հայկական այն ձեռներեցներին, որոնք իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն Ամերիկայի Միացյալ Նահանգներում,
 - 6) կապեր հաստատել Ամերիկայի առևտրի պալատի և ԱՄՆ-ում կամ այլուր գործող առևտրի պալատների կամ միությունների հետ, և
 - 7) ծավալել այլ օրինական գործողություններ՝ սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար:
- The objectives of the Chamber's activities are to:
 promote mutually beneficial relations between the Republic of Armenia and the United States of America (USA) with regard to all types of business activities,
 represent and promote the common economic interests of its members,
 contribute to the development of an attractive trade and investment climate in the Republic of Armenia,
 contribute to the effective settlement of economic issues relating the business relationships between the Republic of Armenia and the United States of America ,
 to support U.S. entrepreneurship in the Republic of Armenia and to the Armenian entrepreneurs registered in the Republic of Armenian, performing business activities of in the United States of America,
 establish relationships with the U.S. Chamber of Commerce or associations located in the USA or elsewhere, and
 undertake all other lawful actions to attain the objectives set forth in this Charter.

III. ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ACTIVITIES OF THE CHAMBE

12. Պալատն իր նպատակներն իրագործելիս իրականացնում է հետևյալ գործունեությունը.
- 1) Հայաստանի Հանրապետությունում գործարարության զարգացման և աջակցման հետ կապված հարցերում համագործակցում է Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության կառավարական մարմինների ու
- cooperates with U.S. and Republic of Armenia government bodies, officials, and business community on issues related to business development and support in the Republic of Armenia,

- պաշտոնյաների, ինչպես նաև գործարար համայնքի հետ,
- 2) կապեր է հաստատում Հայաստանի և ԱՄՆ-ի Հանրապետության և գործարար ձեռնարկությունների և գործարար անհատների միջև, establishes contracts between enterprises and entrepreneurs of the Republic of Armenia and the USA,
 - 3) հավաքում, ստեղծում և տարածում է Պալատի նպատակներն իրագործելուն օժանդակող տեղեկատվություն, փորձ և փորձառություն, collects, creates, and disseminates information, expertise, and practices that will assist the Chamber to accomplish its objectives,
 - 4) կազմակերպում ու անցկացնում է Պալատի նպատակներն իրագործելուն օժանդակող սեմինարներ և այլ միջոցառումներ, organizes and conducts seminars and other events that support the implementation of the Chamber's goals
 - 5) հիմնում ու վարում է էլեկտրոնային գրադարան, որտեղ կլինեն Ամերիկայի Միացյալ Նահանգների -Հայաստանի Հանրապետության գործարար տնտեսական հարցերին վերաբերող արդի փաստաթղթեր ու նյութեր, establishes and maintains an electronic library containing current documents and materials related to U.S.- Republic of Armenia business and economic issues,
 - 6) հրատարակում է պարբերականներ և տեղեկատու գրականություն՝ Հայաստանի Հանրապետություն- Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործարար կապերի, իր անդամների գործունեության, ինչպես նաև գործարարության տարբեր ասպեկտների մասին, publishes periodicals and reference literature on Republic of Armenia-U.S. business relations, activities of its members, as well as various aspects of business,
 - 7) իրականացնում է այլ գործունեություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգերով և սահմաններում՝ նպատակաուղղված Պալատի և վերջինիս անդամների խնդիրների լուծմանը: carries out other activities in accordance with the procedures and within the limits established by Republic of Armenia legislation, aimed at solving the problems of the Chamber and its members.

IV.

ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

CHAMBER MEMBERSHIP PROCEDURE

13. Պալատի անդամ կարող է դառնալ որևէ իրավաբանական անձ, ով ընդունում է Պալատի կանոնադրությամբ սահմանված նպատակները, ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը, համապատասխանում է ստորև նշված պահանջներից որևէ մեկին կամ մի քանիսին և նրա անդամակցությունը հաստատվում է Any legal entity can become a member of the Chamber, if it accepts the goals defined by the Chamber's charter, wants to participate in its activities, meets one or more of the requirements mentioned below, and its membership is approved by the Board of Directors of the Chamber (hereinafter referred to as the "Board of Directors");

Պալատի Տնօրենների Խորհրդի (այսուհետ՝
Տնօրենների Խորհուրդ) կողմից.

- 1) իր մասնակիցների կամ բաժնետերերի կազմում ունի ամերիկյան ներդրող, և/կամ
2) ունի գործարար շահեր ԱՄՆ-ում, և/կամ
3) իր կառավարման մարմիններում կան ԱՄՆ քաղաքացիներ, և/կամ
4) ներգրավված է ԱՄՆ շուկայում ապրանքներ մատակարարելու և/կամ ծառայություններ մատուցելու մեջ, և/կամ
5) ներկայացնում է ամերիկյան ներդրումներ Հայաստանի Հանրապետությունում,
6) հանդիսանում է ԱՄՆ-ում գործող կամ ցուցակված խմբի անդամ կամ այնպիսի խմբի անդամ, որը հիմնադրվել է ԱՄՆ-ում:
has an American investor among its participants or shareholders, and/or
has business interests in the United States of America, and/or
its management bodies include U.S. citizens, and/or
is involved in supplying goods and/or delivering services to the United States market, and/or
presents American investments in the Republic of Armenia,
is a member of a group operating or listed in the United States or a member of a group established in the United States.
14. Պալատի անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Գործադիր Տնօրենին: Գրավոր դիմումի ձևը և կից փաստաթղթերը հաստատվում են Տնօրենների Խորհրդի կողմից՝ Գործադիր Տնօրենի ներկայացմամբ:
A person wishing to become a member of the Chamber shall submit a written application to the executive body of the Organization, the Executive Director. The written application form and attached documents shall be approved by the Board of Directors upon presentation of the Executive Director.
15. Դիմումատուին Պալատի անդամություն շնորհելու հարցը լուծում է Տնօրենների Խորհուրդը՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ընդ որում, այդ որոշումը ենթակա չէ բողոքարկման:
The Board of Directors shall resolve the issue of granting Chamber membership to the applicant by a simple majority of votes. Moreover, that decision shall not subject to appeal.
16. Պալատի անդամ լինելու համար սահմանվում է անդամավճար: Անդամավճարի չափը և վճարման կարգը սահմանվում է Տնօրենների Խորհրդի կողմից:
Membership fee shall be defined for being a Member of the Chamber. The amount of the Membership fee and the payment procedure shall be determined by the Board of Directors.
17. Միջազգային ու տարածաշրջանային ֆինանսական կամ զարգացման կազմակերպությունների կամ դիվանագիտական ներկայացուցչություններին տրամադրվում է համագործակցող անձի հատուկ կարգավիճակ:
International and regional financial organizations, or diplomatic missions dealing with development issues are granted a special status of a cooperating person.

V.

**ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**RIGHTS AND OBLIGATIONS OF THE
CHAMBER'S MEMBERS**

18. Պալատի անդամն իրավունք ունի՝
- Chamber's Member has the right to:
- 1) ընտրել և ընտրվել Պալատի կառավարման մարմիններում
 - 2) ներկա գտնվել Անդամների Ընդհանուր Ժողովին (այսուհետ՝ Ժողով), քվեարկության դրված հարցերին քվեարկել,
 - 3) ներկա գտնվել կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին Տնօրենների Խորհրդի կողմից սահմանված կարգով
 - 4) Տնօրենների Խորհրդի կողմից սահմանված դեպքերում և կարգով օգտվել Պալատի ծառայություններից,
 - 5) Տնօրենների Խորհրդի կողմից սահմանված կարգով, Պալատից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ Պալատի կանոնադրության փոփոխությունների, Պալատի մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,
 - 6) դատական կարգով բողոքարկել Պալատի մարմինների որոշումները,
 - 7) իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:
- Chamber's Member has the right to:
- elect and be elected to the management bodies of the Chamber
- to be present at the General Meeting of Members (hereinafter referred to as the "Meeting"), to vote on the questions put to a vote,
- to attend the meetings of other collegial management bodies based of the procedure established by the Board of Directors
- benefit from the Chamber's services set forth by Board of Directors,
- Based of the procedure established by the Board of Directors, request information from the Chamber, receive copies of the documents concerning the amendments to the Charter of the Chamber, minutes of the Chamber's management bodies, decisions, funds received, as well as receive the copy of the independent auditor's opinion on the financial statements regarding the last three years,
- appeal the decisions of the Chamber's bodies through judicial procedure,
- exercise other rights prescribed by law.
- Կանոնադրության 17-րդ կետով սահմանված իրավունքները ժամանակավորապես կասեցվում են կանոնադրության 18-րդ կետով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:
- The rights defined in clause 17 of the Charter are temporarily suspended in the event of non-fulfillment or improper fulfillment of the obligations set forth in paragraph 18 of the Charter.

19. Պալատի անդամը պարտավոր է՝
- The Chamber's Member is obliged to:

- | | |
|--|--|
| 1) կատարել Պալատի կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները, | fulfill the requirements of the Charter of the Chamber and execute the decisions of the management bodies, |
| 2) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները, | perform in good faith the duties assigned to the member by the decision of the management bodies, |
| 3) ժամանակին վճարել սահմանված անդամավճարը, | pay the defined membership fee on time, |
| 4) զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են որևէ կերպ հեղինակագրկել Պալատի բարի համբավը: | refrain from such actions that may in any way discredit the good reputation of the Chamber. |

VI.

**ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄԻ
ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՄԱՆ
ԿԱՐԳԸ**

**CHAMBER MEMBERSHIP TERMINATION
PROCEDURE**

- | | | |
|-----|---|---|
| 20. | Պալատի անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Պալատից: Սույն կետով սահմանված կարգով Պալատի անդամությունից դադարեցումը կատարվում է Գործադիր Տնօրենի որոշմամբ՝ անդամի դիմումի հիման վրա: | The Chamber's Member is free to terminate its Membership any time. The termination of the Membership in the manner prescribed herein shall be done by the decision of the Executive Director based on the Member's application. |
| 21. | Պալատի անդամը կարող է հեռացվել Պալատից Տնօրենների Խորհրդի որոշմամբ, որը պետք է ընդունվի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե տվյալ անդամը. | The Chamber's Member may be removed from the Chamber by a decision of the Board of Directors adopted by a simple majority vote, if the Chamber's Member: |
| 1) | ավելի քան վեց ամիս ուշացնում է անդամավճարի վճարման իր պարտավորությունը կամ | delays the payment of the membership fee more than six months, or |
| 2) | Պալատի անդամը դադարում է համապատասխանել Պալատի անդամ լինելու՝ սույն Կանոնադրության պահանջներին (բացառությամբ սույն կանոնադրության պետական գրանցման օրվանից առաջ Պալատի անդամ դարձած կազմակերպությունների) կամ | the Chamber's Member ceases to meet the requirements for membership of the Chamber under this Charter (except for organizations that became members of the Chamber before the date of state registration of this charter), or |
| 3) | Պալատի անդամի գործունեությունը վնասում է Պալատի գործունեությանը կամ հակասում է Պալատի նպատակներին: | The activities of a Chamber's Member are detrimental to the Chamber's activity or contradict to the Chamber's objectives. |
| 22. | Պալատի կանոնադրական պահանջները խախտելու կամ Պալատի կառավարման | In case of a breach of the requirements set forth in the Chamber's Charter or failure to fulfill its |

մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Պալատի անդամի նկատմամբ Տնօրենների Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Պալատի անդամությունից հեռացնելու ձևով:

obligations provided by the Chamber's governance bodies, the Board of Directors may impose disciplinary penalties on the Chamber's Member by issuing a warning notice or dismissing from the Chamber.

VII. ՊԱԼԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

MANAGEMENT BODIES OF THE CHAMBER

23. Պալատի կառավարման մարմիններն են՝ Ժողովը, Տնօրենների Խորհուրդը, Տնօրենների Խորհրդի Նախագահը և գործադիր մարմինը՝ Գործադիր Տնօրենը:

The management bodies of the Chamber are the Meeting, the Board of Directors, the President of the Board of Directors and the Executive Body represented by the Executive Director.

VIII. ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

PROCEDURES OF THE MEETING

24. Պալատի գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Պալատի բարձրագույն մարմնին՝ Ժողովին, իսկ վերջինիս գումարման միջև ընկած ժամանակահատվածում՝ Տնօրենների Խորհրդին՝ բացառությամբ սույն կանոնադրության 31-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, 9-րդ և 10-րդ կետերով սահմանված հարցերի:

The right to make a final decision on any matter relating to the Chamber's activities belongs to the highest body of the Chamber—the Meeting—and, until the Meeting is convened, to the Board of Directors, with the exception of issues provided for in the 1st, 2nd, 4th, 9th and 10th subclauses of clause 31 of this Charter.

25. Պալատի հերթական Ժողովը գումարվում է երկու տարին առնվազն մեկ անգամ՝ մինչև Ժողովին հաջորդող երկրորդ տարվա մայիս ամիսը:

The Meeting of the Chamber shall be convened at least once every two years, by May of the second year following the previous Meeting.

26. Պալատի հերթական Ժողովը հրավիրում է Տնօրենների Խորհուրդը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն:

The Meeting of the Chamber shall be convened by the Board of Directors either as a joint meeting of the Members or remotely, by means of telecommunications.

27. Տնօրենների Խորհուրդը որոշում է Ժողովի անցկացման օրը, ժամը և վայրը, ինչպես

The Board of Director shall decide on the date, time and venue of the meeting, as well as the draft

նաև կազմում է ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ծանուցում է Պալատի անդամներին ոչ ուշ, քան տաս օր առաջ՝ պատվիրված նամակով, կամ էլեկտրոնային եղանակով, կամ զանգվածային լրատվության միջոցներով, կամ օրենքով սահմանված այլ եղանակներով:

28. Պալատի արտահերթ ժողով հրավիրվում է Գործադիր Տնօրենի, Տնօրենների Խորհրդի կամ Պալատի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Տնօրենների Խորհրդի կողմից:
29. Պալատի արտահերթ ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
30. Արտահերթ ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ ժողով անցկացնելու օրվանից առնվազն տասնհինգ օր առաջ:
31. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝
- 1) Պալատի կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը, approval of amendments and supplements to the Charter of the Chamber, or approval of the new restated Charter,
 - 2) այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Պալատի մասնակցության մասին որոշման ընդունումը, adoption of a decision on the establishment of another legal entity or participation of the Chamber in another organization,
 - 3) Պալատի առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը, adoption of decisions on the establishment of separate subdivisions or institutions of the Chamber and approval of their charters,
 - 4) Պալատի կառուցվածքի հաստատումը, approval of the Chamber's Organization's structure,

- 5) Տնօրենների Խորհրդի, վերջինիս Նախագահի, Առաջին Փոխնախագահի, Երկրորդ Փոխնախագահ/Գանձապետի ընտրությունը և փոփոխումը, բացառությամբ Տնօրենների Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցումը, որը վերապահված է Տնօրենների Խորհրդի իրավասությանը,
- 6) Պալատի գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,
- 7) Պալատի կառավարման մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և սույն Կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,
- 8) Պալատի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
- 9) Պալատի լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,
- 10) օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:
- election and replacement of the Board of Directors, its President, First Vice-President, and Second Vice-President/Treasurer, except for termination of powers of members of the Board of Directors referred to the competence of the Board of Directors,
- approval of annual reports on the Chamber's activities and the use of assets,
- termination of decisions made by Chamber's management bodies that contradict the requirements of legal acts and this Charter,
- adoption of the Chamber's decision on restructuring,
- adoption of a decision on the liquidation of the Chamber (except in the cases of liquidation by court decision),
- implementation of other powers provided by law.
32. Ժողովն իրավագոր է, եթե գումարվել է օրենքին և սույն Կանոնադրությանը համապատասխան և ժողովին մասնակցում է Պալատի քվեարկելու իրավունք ունեցող բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:
- The Meeting shall have a quorum if it is convened in accordance with the law and this Charter and is attended by more than half of the total number of the Chamber's Members with voting right.
33. Ժողովը նախագահում է Տնօրենների Խորհրդի Նախագահը, նրա բացակայության դեպքում՝ առաջին փոխնախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ երկրորդ փոխնախագահը:
- The Meeting shall be chaired by the President of the Board of Directors or in his/her absence, by the First Vice-President, and in the latter's absence, the Second Vice-President.
34. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ որոշումների ընդունման համար այլ բան սահմանված չէ:
- The decision of the Meeting shall be adopted by a simple majority of the Members attending the Meeting, unless otherwise envisaged for adopting decisions by the acting legislation of the Republic of Armenia.

35. Ժողովի արձանագրությունը ստորագրում են Ժողովի նախագահողը և քարտուղարը: The minutes of the Meeting are signed by the President and Secretary of the Meeting.
36. Ժողովի արձանագրությունները պահպանվում են առնվազն հինգ տարի ժամկետով: The minutes of the Meeting shall be kept for at least five years.

IX. ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

THE FUNCTIONS OF THE BOARD OF DIRECTORS AND THE PROCEDURE FOR THE APPOINTMENT OF MEMBERS

37. Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում Պալատի կառավարման մարմինը Տնօրենների Խորհուրդն է: Between Meetings, the governing body of the Chamber shall be the Board of Directors.
38. Տնօրենների Խորհրդի Նախագահը ընտրվում է Ժողովի կողմից երկու տարի ժամկետով և ի պաշտոնե, հանդիսանում է Պալատի Նախագահ, ինչպես նաև Պալատի Գործադիր տնօրենից զատ Պալատն առանց լիազորագրի ներկայացնելու իրավասություն ունեցող անձ: The President of the Board of the Directors is elected by the Meeting for a period of two years and serves ex officio the President of the Chamber as well as the authorized representative of the Chamber without the need of a power of attorney, besides the Executive Director of the Chamber.
39. Տնօրենների Խորհրդի Նախագահը՝ The President of the Board of Directors:
- 1) համակարգում է Տնօրենների Խորհրդի գործունեությունը, coordinates the activities of the Board of Directors,
 - 2) վերահսկում է Պալատի գործունեությունը, պաշտպանում շահերը և արտաքին հարաբերությունների ժամանակ՝ ներկայացնում Պալատը, exercises supervision over the activities and interests of the Chamber and represents the Chamber in external relations,
 - 3) ներկայացնում է Պալատը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, represents the Chamber in the Republic of Armenia and in foreign countries,
 - 4) նախագահում է Տնօրենների Խորհրդի և Պալատի բոլոր Ժողովների անցկացումը chairs all meetings of the Board of Directors and the Chamber,
 - 5) Տնօրենների Խորհրդի համաձայնությամբ նշանակում է Պալատի կոմիտեների Նախագահներին, appoints the Chairpersons of the Chamber's Committees with the approval of the Board of Directors,
 - 6) կնքում է աշխատանքային պայմանագիր Գործադիր Տնօրենի հետ: concludes an employment contract with the Executive Director.

40. Մինչև Տնօրենների Խորհրդի անդամների ընտրությունը ժողովն իրականացնում է Տնօրենների Խորհրդի Նախագահի, Առաջին Փոխնախագահի, Երկրորդ Փոխնախագահ/Գանձապետի ընտրություն, որոնք ընտրման փաստով դառնում են նաև Տնօրենների Խորհրդի անդամ: Այս ընտրություններից հետո իրականացվում է Տնօրենների Խորհրդի մնացած անդամների ընտրությունը:
- Before the election of the Members of the Board of Directors, the Meeting carries out the elections of the President, First Vice-President and the Second Vice-President/Treasure, who are also elected as Members of the Board of Directors. Following these elections, the election of the remaining Members of the Board of Directors is carried out.
41. Տնօրենների Խորհրդի Նախագահը, առաջին փոխնախագահը և երկրորդ փոխնախագահ/ գանձապետն ընտրվում են ժողովի կողմից երկու տարի ժամկետով, ընդ որում Տնօրենների Խորհրդի Նախագահ կամ Առաջին Փոխնախագահ պետք է լինի սույն Կանոնադրության 13-րդ կետի 6)-րդ ենթակետում սահմանված ընկերության ներկայացուցիչ:
- The President of the Board of Directors, the First Vice-President and the Second Vice-President/Treasure shall be elected by the Meeting for a two-year term. Furthermore, the President of the Board of Directors or the First Vice-President shall be a representative of a company stipulated under subpoint 6) of point 13 of this Charter.
42. Առաջին Փոխնախագահը, Նախագահի բացակայության ժամանակ իրականացնում է վերջինիս պարտականությունները:
- When the President is absent, the First Vice-President shall perform the latter's duties.
43. Երկրորդ փոխնախագահ/գանձապետը վերահսկում է Պալատի ֆինանսական գործարքները, ինչպես նաև կազմում է տարեկան եկամուտների և ծախսերի բյուջեն, իսկ յուրաքանչյուր եռամսյակի վերջում ներկայացնում է ֆինանսական հաշվետվություն Տնօրենների Խորհրդի հաստատմանը:
- The Second Vice-President/Treasurer shall control the financial operations of the Chamber, prepare an annual budget for revenue and expenditures, and shall submit financial reports of the approval of the Bord of Directors at the end of each quarter year.
44. Տնօրենների Խորհուրդը կազմված է տասներկու անդամից (ներառյալ Նախագահն ու առաջին և երկրորդ փոխնախագահները), որոնք ընտրվում են ժողովի կողմից երկու տարի ժամկետով՝ բացառությամբ սույն Կանոնադրության Անցումային Դրույթներում սահմանված դեպքերի:
- The Board of Directors consists of twelve members (including the President and the First and Second Vice-Presidents), who are elected by the Meeting for a period of two years, except in cases stipulated under the Transitional Provisions of this Charter .

45. Տնօրենների Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է ընտրվել ոչ ավել քան երկու անընդմեջ անգամ: Moreover, each member may be elected no more than two times consecutive terms.
46. Տնօրենների Խորհուրդը մասնավորապես՝ The Board of Directors in particular:
- 1) նշանակում և աշխատանքից ազատում է Գործադիր Տնօրենին, սահմանում է վերջինիս վարձատրության կարգը և պայմանները, appoints or dismisses the Executive Director and determines the reimbursement terms of the latter,
 - 2) հաստատում է Պալատի գործունեության տարեկան հաշվետվությունները, approves the annual reports on the Chamber's activities,
 - 3) հաստատում է Պալատի աուդիտ իրականացնող անձին, approves the Auditor of the Chamber,
 - 4) հաստատում և վերահսկում է Պալատի կողմից հովանավորած ծրագրերի իրականացումը, approves and exercises supervision over the implementation of the programs sponsored by the Chamber,
 - 5) հաստատում է տարեկան անդամավճարների չափը և գանձման կարգը, approves the annual Membership fees and the charging order,
 - 6) հաստատում և ստուգում է տարեկան բյուջետային ծախսերը և դրանց կատարումը, approves and reviews the annual budget expenditures and their execution,
 - 7) Պալատին կից ձևավորում է կոմիտեներ՝ հատուկ ծրագրերի իրականացման նպատակով, establishes Committees adjunct to the Chamber for implementing specific programs,
 - 8) ընդունում և հեռացնում է Պալատի անդամությունից, բացառությամբ անդամության կամավոր դադարման դեպքերի, approves or terminates the Chamber's Membership, except in cases of voluntary termination of membership,
 - 9) Տնօրենների Խորհրդի յուրաքանչյուր անդամի նշանակում է որևէ հանձնաժողովի նախագահ կամ վերջիններիս համար սահմանում է վերահսկողության հատուկ շրջանակ, each member of the Board of Directors appoints a chairman of a committee or sets a special control framework for the latter,
 - 10) որոշումներ է կայացնում բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք վերապահված չեն Պալատի կառավարման այլ մարմիններին: make decisions on all matters not reserved for other bodies of the Chamber.
47. Տնօրենների Խորհրդի անդամը պետք է հանդիսանա Պալատի անդամ կազմակերպության խոշոր բաժնետեր կամ լինի Պալատի անդամ կազմակերպության գործադիր-ղեկավար կազմի անդամ: A member of the Board of Directors must be a major shareholder of a member organization of the Chamber or a member of the executive-management team of a member organization.

48. Տնօրենների Խորհրդի անդամը պետք է հանդիսանա որևէ հանձնաժողովի նախագահ կամ իրականացնի վերահսկողություն՝ Պալատի գործունեության որևէ ոլորտում (օրինակ՝ հաշվապահական հաշվառում, իրավական հարցեր, ՏՏ հարցեր, և այլն):
- A member of the Board of Directors shall be the chairman of a committee or exercise control over any area of the Chamber's activities (e.g., accounting, legal matters, IT matters, etc.).
49. Տնօրենների Խորհրդի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Տնօրենների Խորհրդի կողմից Տնօրենների Խորհրդի բոլոր անդամների (բացառությամբ այն անդամի, որի լիազորությունների դադարեցումը խնդրո առարկա է) ձայների 2/3-ով, եթե.
- The powers of a member of the Board of Directors may be terminated early by 2/3 majority vote of all members of the Board (excluding the member whose powers are being considered for termination), if:
- 1) Տնօրենների Խորհրդի անդամը մահացել է.
 - 2) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող.
 - 3) Տնօրենների Խորհրդի անդամը իր գործողություններով հեղինակագրկել է Պալատի բարի համբավը,
 - 4) Տնօրենների Խորհրդի անդամը չի մասնակցել հաշվետու տարվա համար նախատեսված Տնօրենների Խորհրդի նիստերի մեկ երրորդին՝ առանց որևէ հիմնավոր պատճառի,
 - 5) Տնօրենների Խորհրդի անդամը դադարել է լինել Պալատի անդամ կազմակերպության խոշոր բաժնետեր կամ ազատվել է իր զբաղեցրած պաշտոնից և այլևս չի հանդիսանում գործադիր-ղեկավար մարմնի անդամ,
 - 6) Պալատի անդամ կազմակերպության անդամակցությունը Պալատում դադարել է,
 - 7) Տնօրենների Խորհրդի անդամը պատշաճ չի կատարել իր վրա դրված պարտականությունները, չի իրականացրել վերահսկողություն Տնօրենների Խորհրդի կողմից իր ղեկավարությանը վստահված ոլորտում և (կամ) դուրս է եկել իր լիազորությունների սահմաններից:
- A member of the Board of Directors has died, has been declared as incapacitated or has limited capacity or is recognized as a missing person by a court decision,
- The member of the Board of Directors discredited the good reputation of the Chamber by his/her actions,
- the member of the Board of Directors did not participate in one third of the meetings of the Board of Directors scheduled for the reporting year without any valid reason,
- A member of the Board of Directors has ceased to be a major shareholder of a Chamber member organization or has been relieved of his/her position and does not hold a managerial-executive function,
- the membership of the member organization in the Chamber has ceased,
- The member of the Board of Directors did not properly perform the duties assigned to him/her, did not exercise control in the field entrusted to his/her leadership by the Board of Directors and/or exceeded the limits of his/her powers.

50. Տնօրենների Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ: The meetings of the Board of Directors shall be convened at least once a quarter.
51. Տնօրենների Խորհրդի նիստերը հրավիրվում են Տնօրենների Խորհրդի Նախագահի, իսկ վերջինիս բացակայության դեպքում առաջին փոխնախագահի կամ նաև Գործադիր Տնօրենի նախաձեռնությամբ՝ այդ մասին հինգ օր առաջ ծանուցելով Տնօրենների Խորհրդի անդամներին: The meetings of the Board of Directors shall be convened by the President of the Board of Directors, or in case of the latter's absence, by the initiative of the First Vice-President or the Executive Director, by notifying the Members of the Board of Directors thereof at least five days prior to the Meeting.
52. Տնօրենների Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Տնօրենների Խորհրդի անդամների կեսից ավելին: The Board of Directors' Meeting shall reach quorum if it is attended by more than half of the Members of the Board of Directors.
53. Տնօրենների Խորհրդի նիստերին առանց քվեարկելու իրավունքի մասնակցում են Գործադիր Տնօրենը և Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչը: The Executive Director and the representative of the U.S. Embassy in the Republic of Armenia shall attend the meetings of the Board of Directors as non-voting Members.
54. Տնօրենների Խորհրդի նիստերի անցկացման ընթացակարգն ընդունվում է Տնօրենների Խորհրդի կողմից: The procedure for holding Meetings of the Board of Directors shall be approved by the Board of Directors.
55. Տնօրենների Խորհուրդը որոշումներ է ընդունում Տնօրենների Խորհրդի բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ՝ այն բոլոր հարցերով, որոնք վերապահված չեն Պալատի կառավարման մյուս մարմիններին, ինչպես նաև սույն Կանոնադրությամբ սահմանված հարցերով: The Board of Directors adopts decisions by the majority of the votes of all the members of the Board of Directors, on all the issues that are not reserved to the other governing bodies of the Chamber, as well as on the issues defined by this Charter.

X.

**ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

FUNCTIONS OF THE EXECUTIVE BODY

56. Գործադիր Տնօրենը հանդիսանում է Պալատի գործադիր մարմինը և նշանակվում է Տնօրենների Խորհրդի կողմից 10 տարի ժամկետով: The Executive Director is the executive body of the Chamber and is appointed by the Board of Directors for a period of 10 yearsn .
57. Գործադիր Տնօրենը ղեկավարում է Պալատի ընթացիկ գործունեությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Կանոնադրության, Ժողովի The Executive Director manages the current activities of the Chamber, as well as in accordance with Republic of Armenia legislation, the Charter,

և Տնօրենների խորհրդի որոշումներին համապատասխան.

and the decisions of the Meeting and Board of Directors:

- 1) ապահովվում է ժողովի և Տնօրենների խորհրդի որոշումների կատարումը, ensures the implementation of decisions made by the Meeting and Board of Directors,
- 2) տնօրինում և կառավարում է Պալատի ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Պալատի անունից, manages and administers the Chamber's assets of any type and size, including financial means, conclude transactions on behalf of the Chamber,
- 3) ներկայացնում է Պալատը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, represents the Chamber in the Republic of Armenia and in foreign countries,
- 4) տալիս է լիազորագրեր, grants powers of attorney,
- 5) բանկերում բացում է Պալատի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ, opens settlement accounts (including foreign currency) and other bank accounts,
- 6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, issues orders, commands within his/her competence, gives binding instructions for execution, and exercises supervision over their implementation,
- 7) Տնօրենների խորհրդի համաձայնությամբ հաստատում է Պալատի աշխատակազմի հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը, approves the reimbursement terms of the Chamber's employees and the annual expenditure estimate upon the approval of the Board of Directors,
- 8) Տնօրենների խորհրդի համաձայնությամբ հաստատում է Պալատի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին և այլ կարգապահական կանոնները, approves the internal documents regulating the Chamber's activities, including those for separate units, internal disciplinary and other rules upon the agreement of the Board of Directors,
- 9) հաստատում է Պալատի հաշվետվությունները՝ Տնօրենների խորհրդին և ժողովին ներկայացնելու նպատակով, approves the reports of the Chamber and its bodies for submission to the Meeting or the Board of Directors,
- 10) հաստատում է և Տնօրենների խորհրդին և ժողովին է ներկայացնում ժողովների գումարմանը նախորդող տարիների Պալատի գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, submits to the approval of the Meeting and the Board of Directors the annual reports on the Chamber's assets use and the Chamber's activities of the years preceding the meetings,
- 11) Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Պալատի անդամության նախագահի և անդամների անունները, nominates candidates for membership in the Chamber for approval by the Board of Directors and suggests to terminate the memberships,

- թեկնածուներին և առաջարկում հեռացնել անդամությունից,
- 12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:
- exercises other powers prescribed by this Charter and the legislation of the Republic of Armenia.

XI. ՊԱԼԱՏԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ **ASSETS OF THE CHAMBER AND SOURCES OF THEIR FORMATION**

58. Պալատը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
- The Chamber shall hold separated assets as its ownership and shall be liable for its obligations with those assets.
59. Պալատը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:
- The Chamber may have both movable and immovable property as its ownership, such as buildings, vehicles, equipment, funds, securities and other assets not prohibited by law.
60. Պալատի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել.
- The source for the formation of the assets of the Chamber may include:
- 1) Պալատի անդամների անդամավճարները և ներդրումները, membership fees and investments by the Chamber's Member,
 - 2) Պալատի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները, funds from the entrepreneurial activities of the Chamber,
 - 3) Պալատի ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները, funds from other commercial organizations, which the Chamber established or holds share therein,
 - 4) Պալատի նպատակներին աջակցող դրամաշնորհները կամ grants or donations supporting the objectives of the Chamber,
 - 5) Հանգանակությունները, Fundraisings,
 - 6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ: other funds not prohibited by the legislation of the Republic of Armenia.
61. Պալատի միջոցները կարող են օգտագործվել բացառապես սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:
- The funds of the Chamber may be used exclusively for the implementation of the goals and tasks defined by this Charter.

62. Տնօրենների Խորհրդի անդամի կողմից Պալատի գործունեության համար կամ կապակցությամբ իրականացված ծախսերը կարող են փոխհատուցվել Տնօրենների Խորհրդի որոշմամբ:
- Expenses incurred by a member of the Board of Directors for the activities of the Chamber may be subject to compensation by the decision of the Board of Directors.

XII. ՊԱԼԱՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

RESTRUCTURING AND LIQUIDATION OF THE CHAMBER

63. Պալատը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:
- The Chamber may be liquidated upon the Meeting's decision or court judgment.
64. Պալատը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:
- The Chamber shall form the liquidation commission and determine the liquidation procedure and timeframes in a manner prescribed by law.
65. Պալատը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Պալատի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
- In case of liquidation of the Chamber, the remaining property after satisfying creditors' claims is directed to the purposes stipulated by the charter of the Chamber, if this is not possible, funds are transferred to the state budget, and other property is transferred by right of ownership to the Republic of Armenia represented by the government, except in cases established by law.
66. Պալատը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:
- The Chamber can be reorganized by the decision of the Meeting or in the cases defined by the law, by the decision of the court, in accordance with the procedure defined by the law.

XIII. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

TRANSITIONAL PROVISIONS

67. Երկու հազար քսաներեք թվականին ընտրված Տնօրենների Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են երկու հազար քսանհինգ թվականին կազմակերպվելիք հերթական Ժողովի օրը, որում քվեարկության է դրվելու Տնօրենների Խորհրդի նոր կազմի ընտրության հարցը:
- In two thousand twenty-three the powers of the members of the Board of Directors will terminate on the day of the next general Meeting to be held in two thousand twenty-five, during which a vote will be held on the matter of electing a new composition of the Board of Directors
68. Մինչև երկու հազար քսանհինգ թվականը Տնօրենների Խորհրդի անդամ ընտրված
- Persons elected as members of the Board of Directors before two thousand twenty-five have the

անձինք իրավունք ունեն սույն կանոնադրության պահանջներին համապատասխան մասնակցել երկու հազար քսանհինգ թվականի ընտրություններին, նույնիսկ այն դեպքում, եթե նրանք նախկինում արդեն իսկ երկու անգամ զբաղեցրել են Տնօրենների հորհրդի անդամի պաշտոնը:

right to participate in the elections of two thousand twenty-five in accordance with the requirements of this charter, even if they have previously held the position of a member of the Board of Directors twice.

69. Երկու հազար քսանհինգ թվականին Տնօրենների հորհրդի անդամ ընտրված յուրաքանչյուր անդամ կարող է դրանից հետո Տնօրենների հորհրդի անդամ ընտրվել ոչ ավել քան երկու անգամ անընդմեջ, որը ներառում է 2025 թվականին սկիզբ առած պաշտոնավարման ժամկետը:

Each member elected to the Board of Directors in the year two thousand twenty-five may thereafter be elected to the Board of Directors no more than twice consecutively, which included the term of office started in 2025.

70. Երկու հազար քսանհինգ թվականին Տնօրենների հորհրդի անդամների ընտրությունը կատարվում է հետևյալ կերպ. Նախագահն ու առաջին և երկրորդ փոխնախագահները ընտրվում են երկու տարի ժամկետով, Տնօրենների հորհրդի անդամների ընտրության քվեարկության արդյունքում առավել բարձր ձայներ ստացած երեք անդամները ընտրվում են երկու տարի ժամկետով, իսկ մնացած վեց անդամներն ընտրվում են մեկ տարի ժամկետով:

In the year two thousand twenty-five, the members of the Board of Directors are elected as follows:

The President and the first and second vice-presidents are elected for a two-year term. The three members who receive the most votes in the election of the members of the Board of Directors are elected for a two-year term, and the remaining six members are elected for a one-year term.

71. Երկու հազար քսանվեց թվականին պետք է կազմակերպվի մեկ տարով ընտրված Տնօրենների հորհրդի անդամների թափուր տեղերի ընտրություն, որում ընտրված անձինք պաշտոնավարում են երկու տարով:

In the year two thousand and twenty-six, there shall be organized an election for the vacancies of the members of the Board of Directors elected for one year, in which the elected persons shall hold office for two years.

